ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՈՒՐԸ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Շուշան ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2014 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2016 թ. աշխատանքի է անցել ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում՝ սկզբում որպես կրտսեր հետազոտող, իսկ 2018 թ.-ից առայսօր՝ որպես փորձագետ: Հեղինակ և համահեղինակ է 9 գիտական աշխատանքների:

Հիմնաբառեր. *Covid-19, ծառայությունների առևտուր, ճամփորդություններ, առցանց ծառայություններ*

Համավարակով պայմանավորված սահմանափակումները մեծ վնաս են հասցնում ծառայությունների առևտրի այն հատվածներին, որոնք կապված են մարդկանց տեղաշարժի հետ: Ծառայությունների առևտրի վրա բացասական ազդեցություն է ունեցել նաև տնտեսական ակտիվության նվազումը: Միաժամանակ, տեղաշարժի սահմանափակումները մեծացրել են առցանց ծառայությունների նկատմամբ պահանջարկը, ինչի արդյունքում ավելացել է հեռահաղորդակցման, համակարգչային, տեղեկատվական և ֆինանսական ծառայությունների առևտուրը: Նույն միտումները դրսևորվել են նաև Հայաստանի Հանրապետությունում: Սահմանները փակելու հետևանքով զբոսաշրջության ոլորտը կաթվածահար է եղել, կտրուկ կրճատվել է տրանսպորտի, շինարարության, անձնական մշակութային և զվարճանքի ծառայությունների առևտուրը: Այդ ամենին հակառակ, համավարակը դրականորեն է անդրադարձել տեղեկատվական և ֆինանսական ծառայությունների առևտրի վրա:

Կորոնավիրուսի համավարակի հետ կապված կարանտինային միջոցառումները շոկային ազդեցություն են թողել համաշխարհային տնտեսության վրա: Սահմանափակումների կիրառումը մեծ վնասներ է հասցրել նաև ծառայությունների համաշխարհային առևտրին, որին բաժին է ընկնում համաշխարհային ՀՆԱ 2/3-ը, օտարերկրյա ներդրումների 2/3-ը և համաշխարհային առևտրի 40%-ից ավելին[1]:

Առաջին եռամսյակում ծառայությունների առևտրի անկումը փոքր է եղել, քանի որ կարանտինային միջոցառում-

[1] data.wto.org

ներն ամբողջ աշխարհում կիրառվել են՝ սկսած 2020 թ. մարտից: Ծառայությունների համաշխարհային արտահանումը 2020 թ. հունվար-մարտին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կրճատվել է 7%-ով, ներուծումը՝ 4%-ով, իսկ երկրորդ եռամսյակում համապատասխանաբար՝ 29%-ով և 32%-ով[2]:

Ծառայությունների որոշ տեսակներ, մասնավորապես՝ ճանապարհորդությունների, մարդատար տրանսպորտային, ինչպես նաև շինարարական, որոնց մատուցումը կապված է մարդկանց տեղաշարժի հետ, չափազանց շատ են տուժել, և բավական երկար ժամանակ է անհրաժեշտ դրանց վերականգնման համար: Ճանապարհորդական ծախսերը 2020 թ. առաջին եռամսյակում նվազել են 25%-ով, երկրորդում՝ 81%-ով (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ), տրանսպորտային ծառայություններինը՝ համապատասխանաբար՝ 8%-ով և 31%-ով, շինարարությանը՝ 25%-ով և 24%-ով[3]: Համակարգչային ծառայությունների ոլորտը միակն է, որտեղ աճ է գրանցվել: Մասնավորապես՝ 2020 թ. առաջին եռամսյակում դա կազմել է 12%, երկրորդում՝ 4%:

Տրանսպորտային, զբոսաշրջային, շինարարության, անձնական, մշակութային և ռեկրեացիոն ծառայությունները համարվում են ավանդական, իսկ գործարար (ներառյալ ԳՀՓԿԱ և խորհրդատվական), համակարգչային և տեղեկատվական, ֆինանսական, ինչպես նաև մտավոր սեփականության հետ կապված ծառայությունները՝ ժամանակակից, բարձր տեխնոլոգիական: Ինչպես վերը նշեցինք, համավարակը չափազանց բացասաբար է անդրադարձել ավանդական ծառայությունների առևտրի վրա: Միաժամանակ, համավարակի ազդեցությունը ժամանակակից ծառայությունների նկատմամբ սահմանափակ է: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջիններիս մեծ մասը հնարավոր է մատուցել առցանց՝ առանց գնորդի և վաճառողի ֆիզիկական ներկայության: Բացի այդ, կարանտինի պայմաններում տնտեսության մի շարք ոլորտներում առցանց աշխատանքին անցումը, կրթության առցանց կազմակերպումը խթանեցին այս ոլորտի աճը:

Վերջին երկու տասնամյակներում տեխնոլոգիական առաջընթացը փոխել է ծառայությունների առևտրի կառուցվածքը: Թեև գերակշռում են ավանդական ծառայությունները, սակայն դրանց մասնաբաժինն անընդհատ կրճատվում է՝ տեղը զիջելով ժամանակակից ծառայություններին[4]:

Դիտարկենք իրավիճակը Հայաստանում:

Ծառայությունների առևտրի նմանատիպ կառուցվածք բնորոշ է նաև Հայաստանին: Թեև ավանդական ծառայություններն ունեն մեծ տեսակարար մասնաբաժին, սակայն վերջինս անշեղորեն նվազում է՝ նաև համավարակով պայմանավորված: 2020 թ. առաջին կիսամյակում ավանդական ծառայությունների մասնաբաժինը կազմել է 66.7%, ժամանակակից ծառայություններինը՝ 33.3%, այն դեպքում, երբ 2019 թ. նույն ժամանակահատվածում այդ ցուցանիշները համապատասխանաբար եղել են 82.1% և 17.9%:

Ըստ վճարային հաշվեկշռի՝ 2020 թ. առաջին կիսամյակում ծառայությունների արտահանման ծավալները կազմել են 598,4 մլն ԱՄՆ դոլար, այսինքն՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կրճատվել են 38.9%-ով: Միաժամանակ, ներմուծման ծավալները կազմել են 532.9 մլն ԱՄՆ դոլար, այսինքն՝ կրճատվել են 40,8%-ով[5]: Ընդ որում, քանի որ կարանտինային միջոցառումներ կիրառվել են՝ սկսած 2020 թ. մարտից, առաջին եռամսյակում գրանցվել է անհամեմատ ավելի փոքր անկում, քան երկրորդ եռամսյակում: Այսպես՝ 2020 թ. հունվար-մարտին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արտահանումը նվազել է

[2] data.wto.org
[3] data.wto.org
[4] Մովսիսյան Շ., Ծառայությունների առևտուր. ՀՀ արտաքին տնտեսական գործունեության հեռանկարային սեգմենտը, մայիս, 2019, https://asue.am/amberd/publication/analytics/trade-in-services-the-perspective-segment-of-the-ra-foreign-economic-activity
[5] cba.am



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

ՀՀ ծառայությունների արտահանումը, 2020 թ. հունվար-հունիս

7,8%-ով, իսկ ապրիլ-հունիսին՝ 65,5%-ով: Ծառայությունների ներմուծումը 2020 թ. հունվար-մարտին նվազել է 7,8%-ով, ապրիլ-մարտին՝ 68,9%-ով:

Ճանապարհորդությունները, որոնց բաժին է ընկնում ՀՀ ծառայությունների առևտրի մոտ 60%-ը, կաթվածահար են եղել համավարակի հետևանքով: Ճանապարհորդական ծառայությունների արտահանումն առաջին կիսամյակում կազմել է 229,4 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազելով 354,7 մլն ԱՄՆ դոլարով կամ 60.7%-ով:

Ըստ արձանագրված ցուցանիշների՝ հաջորդ տուժած հատվածը շինարարությունն է: Արտասահմանում իրականացվող շինարարական ծառայությունների ծավալը կազմել է 32,7 մլն ԱՄՆ դոլար, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 29,3 մլն ԱՄՆ դոլարով կամ 47.3%-ով: Անձնական, մշակութային, զվարճանքի ծառայությունների արտահանումը կազմել է 4,4 մլն ԱՄՆ դոլար, ինչը 2019 թ. նույն ժամանակահատվածի ցուցանիշին զիջում է 3,6 մլն ԱՄՆ դոլարով: Մեծ անկում է գրանցվել նաև տրանսպորտային ծառայությունների արտահանման ոլորտում (12,8%), հատկապես տուժել է մարդատար տրանսպորտը, որտեղ անկումը կազմել է 58.9%: Քիչ չափով նվազել է նաև բեռնատար տրասպորտային ծառայությունների ծավալը (6.9%): Ընդ որում, օդային բեռնափոխադրումների ծավալն աճել է 69%-ով, բայց քանի որ ընդհանուր բեռնափոխադրումներում օդային տրանսպորտի դերը չնչին է, այս աճը տրանսպորտային ծառայությունների արտահանման ընդհանուր ցուցանիշի վրա էական ազդեցություն չի ունեցել:

Միաժամանակ, որոշ հատվածներում աճ է գրանցվել՝ պայմանավորված ծառայությունների առցանց մատուցման պահանջարկի մեծացմամբ: Հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ծառայությունների արտահանումը կազմել է 156.2 մլն ԱՄՆ դոլար, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը գերազանցում է 20.5%-ով: Ընդհանրապես, տեղեկատվական ծառայություններն արտահանման ամենադինամիկ զարգացող ուղղությունն է եղել, որի ծավալները վերջին 5 տարիների ընթացքում կրկնապատկվել են, զիջելով միայն ճանապարհորդական և տրանսպորտային ծառայություններին, իսկ 2020 թ. առաջին կիսամյակում առաջ են անցել տրանսպոր-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

ՀՀ ծառայությունների ներմուծումը, 2020 թ. հունվար-հունիս

տից՝ դառնալով երկրորդ խոշոր հատվածը: Որոշակի աճ արձանագրվել է նաև ֆինանսական (9,9%) ու պետական ապրանքների և ծառայությունների (1.3%) արտահանման ուղղություններում:

Ծառայությունների ներմուծման մեջ նույնպես ամենամեծ անկումը գրանցվել է զբոսաշրջության ոլորտում: Ճանապարհորդական ծառայությունների ներմուծման ծավալը կազմել է 219,5 մլն ԱՄՆ դոլար, որը 58%-ով ցածր է նախորդ տարվա ցուցանիշից: Հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ծառայությունների ներմուծումը նվազել է 26%-ով, նույն չափով կրճատվել են անձնական, մշակութային և զվարճանքի ծառայությունների ներմուծման ծավալները: Տրանսպորտային ծառայությունների ներմուծումը նվազել է 7.9%-ով: Մարդատար տրանսպորտային ծառայությունների ծավալը նվազել է 61.9%-ով, բեռնատար տրանսպորտինը՝ 17.9%-ով: Միաժամանակ, օդային բեռնափոխադրման ծառայությունների ծավալն ավելացել է 2.6 անգամ, սակայն դա փոքր ցուցանիշ է և էական ազդեցություն չունի ընդհանուր տրանսպորտային ծառայությունների ներմուծման ցուցանիշների վրա: Բեռնափոխադրումների ծավալի նվազումը պայմանավորված է ցածր տնտեսական ակտիվությամբ, մասամբ նաև՝ առողջապահական միջոցառումների (օրինակ՝ ջերմաչափում, թեստի հանձնում և այլն) հետ կապված փոխադրման ժամանակի մեծացմամբ:

Ներմուծման ամենամեծ աճը գրանցվել է շինարարության ոլորտում՝ 40.4%, իսկ ֆինանսական ծառայությունների ներմուծումն ավելացել է 21.2%-ով:

Ամփոփելով նշենք, որ համավարակով պայմանավորված տեղաշարժի սահմանափակումները, սոցիալական հեռավորություն պահպանելու միջոցառումները մեծ վնաս են հասցնում ծառայությունների համաշխարհային առևտրի այն հատվածներին, որոնք կապված են մարդկանց տեղաշարժի հետ: Ծառայությունների առևտրի վրա բացասական ազդեցություն է ունեցել նաև համախառն պահանջարկի, տնտեսական ակտիվության նվազումը: Միաժամանակ, տեղաշարժի սահմանափակումները մեծացրել են առցանց ծառայությունների նկատմամբ պահանջարկը, ինչի արդյունքում ավելացել է հեռահաղորդակցության, համակարգչային, տեղեկատվական և ֆինանսական ծառայությունների առևտուրը: Նույն միտումները դրսևորվել են

նաև Հայաստանի Հանրապետությունում: Սահմանները փակելու հետևանքով զբոսաշրջության ոլորտը կաթվածահար է եղել, կտրուկ նվազել է տրանսպորտի, շինարարության, անձնական մշակութային և զվարճանքի ծառայությունների առևտուրը: Այդ ամենին հակառակ՝ համավարակը դրականորեն է անդրադարձել տեղեկատվական և ֆինանսական ծառայությունների առևտրի վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մովսիսյան Շ., Ծառայությունների առևտուր. ՀՀ արտաքին տնտեսական գործունեության հեռանկարային սեգմենտը, մայիս, 2019, https://asue.am/amberd/publication/analytics/trade-in-services-the-perspective-segment-of-the-ra-foreign-economic-activity
2. www.data.wto.org
3. www.cba.am

Шушан МОВСИСЯН
Эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ

ТРАЕКТОРИЯ ПАНДЕМИИ

ТОРГОВЛЯ УСЛУГАМИ В УСЛОВИЯХ ПАНДЕМИИ

Ограничения в связи с пандемией наносят большой урон тем сегментам торговли услугами, которые связаны с перемещением людей. На торговлю услугами негативное влияние оказал также спад экономической активности. В то же время ограничения мобильности увеличили спрос на онлайн-услуги, в результате чего возрастает торговля телекоммуникационными, компьютерными, информационными и финансовыми услугами. Такие же тенденции проявились и в Республике Армения. Сектор туризма парализован закрытием границы. Резко сократилась торговля транспортными, строительными услугами, услуги частным лицам в сфере культуры и отдыха. Напротив, пандемия положительно повлияла на торговлю информационными и финансовыми услугами.

Ключевые слова: *Covid-19, торговля услугами, поездки, онлайн-услуги*

Shushan MOVSISYAN
Expert at «Amberd» Research Center, ASUE

PANDEMIC TRAJECTORY

TRADE OF SERVICES IN THE CONTEXT OF COVID-19 PANDEMIC

COVID-19 restrictions have had a devastating impact on those sectors of services trade, provision of which are related to mobility of people. The decline of economic activity has also had a negative impact in service trade. Meanwhile, lockdown measures have raised the demand of online services resulting growth of telecommunications, computer, information, as well as financial service trade. Similar trends have also been observed in Armenia. The border closure paralyzed tourism and caused a sharp decline in transportation, construction, personal, cultural and recreational services. On the other hand, pandemic have increased the demand for information and financial services.

Keywords: *Covid-19, trade in services, travel, online services*